Փաստեր

Անաշխատունակության Պետական Ապահովագրության Ծրագիր

Անաշխատունակության Պետական Ապահովագրության (ԱՊԱ) աշխատակիցների կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որը, համապատասխանության դեպքում, ապահովում է Ձեր շաբաթական աշխատավարձի մոտավորապես 60-70 տոկոսը՝ կախված եկամուտից: ԱՊԱ ծրագիրը բաղկացած է աշխատավարձի մասնակի փոխարինման երկու առանձին նպաստներից՝
***Անաշխատունակության Ապահովագրություն (ԱԱ) և Վճարվող Ընտանեկան Արձակուրդ (ՎԸԱ)**

Արդյո՞ք ես համապատասխանում եմ ԱՊԱ-ին:

Քալիֆորնիայի մոտավորապես 18,7 միլիոն աշխատողներ ընդգրկված են ԱՊԱ-ում Դուք կարող եք որակավորվել, եթե՝

1. Կես կամ լրիվ դրույքով աշխատող աշխատակից եք, որը նպաստում է ԱՊԱ-ի ծրագրին պետական աշխատավարձի հատկացումների միջոցով [ԱՊԱ-ի փոխարեն Դուք կարող եք ընդգրկված լինել կամավոր պլանի մեջ այցելեք VP Information (edd.ca.gov/Disability/VP_ information.htm) կայք], - ԿԱՄ –
2. Ինքնազբաղված կալիֆորնիացի կամ անկախ կատարող եք, որն ունեցել է իր ներդրումը Անաշխատունակության Ապահովագրության Ընտրանքային Ներառման ծրագրում: Հավելյալ տեղեկատվության համար այցելեք Self-Employed/Independent Contractor (edd.ca.gov/Disability/Self-Employed.htm) կայք:

Արդյո՞ք ես համապատասխանում եմ

Դուք կարող եք համապատասխանել նպաստ ստանալու պահանջներին, եթե՝

- Դիմել եք առցանց կամ փոստով ԱԱ-ի համար ոչ ուշ, քան 49, ՎԸԱ-ի համար ոչ ուշ, քան 41 օր հետո՝ սկսած Ձեր անաշխատունակության կամ ընտանեկան արձակուրդի օրվանից:
- Վաստակել եք առնվազն 300 դոլար աշխատավարձ (որը հանդիսացել է ԱՊԱ-ի հարկման առարկա) հայցի 12-ամսյա հիմնական ժամանակահատվածի ընթացքում:
- Ունեք Ձեր բժշկի/թերապևտի կողմից լրացված՝ Ձեր անաշխատունակությունը հաստատող բժշկական փաստաթղթերը (ԱԱ-ի համար), ունեք խնամառուի բժշկի/թերապևտի լրացրած խնամքի անհրաժեշտությունը հաստատող բժշկական փաստաթղթերի (ՎԸԱ-ի խնամքի համար) տպագիր պատճենը, կամ տրամադրել եք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Ձեր եւ Ձեր նոր երեխայի միջեւ կապը (կապվածության ՎԸԱ-ի համար ազդում համապատասխանության վրա: օժանդակող ռազմական փաստաթղթերը (ՎԸԱ ռազմական նպաստի համար):

Դուք կարող եք չհամապատասխանել նպաստ ստանալու պահանջներին, եթե՝

- Դուք ստանում եք ԶԶՎ մեկ այլ ծրագրի նպաստներ (գործազրկության նպաստ, ԱԱ կամ ՎԸԱ):
- Չեք կորցնում աշխատավարձերը:
- Հանցանք կատարելու մեղադրանքի հետ կապված գտնվում եք կալանքի տակ:
- Ունեք կրոնական հարկային ազատում ԱՊԱ հարկերից:
- Չեք աշխատել և աշխատանք չեք փնտրել այն ժամանակ, երբ Ձեր անաշխատունակության կամ ընտանեկան արձակուրդն սկսվել է:
- Շաբաթական կտրվածքով ստանում եք աշխատավարձի՝ ԱԱ մակարդակին հավասար կամ այն գերազանցող փոխհատուցում:

ԱՊԱ-ն չի ապահովում աշխատատեղի պաշտպանություն կամ աշխատանքային իրավունքների վերադարձ: Այդուհանդերձ, աշխատանքի պաշտպանությունը կարող է ապահովվել, եթե Ձեր վրա տարածվում է Ընտանեկան և Բժշկական Արձակուրդի Դաշնային օրենքը, Կալիֆոռնիայի Ընտանեկան Իրավունքների մասին օրենքը կամ Նոր Ծնողական Արձակուրդի մասին օրենքը:

Ինչպե՞ս կարող եմ դիմել:

Նպաստ ստանալու համար կարող եք դիմել առցանց կամ փոստով՝ լրացնելով *Claim for Disability Insurance (DI) Benefits* (DE 2501) կամ *Claim for Paid Family Leave (PFL) Benefits* (DE 2501F): Առցանց դիմելու համար այցելեք SDI Online (edd.ca.gov/SDI_Online) կայք: Փոստով դիմելու համար ուղարկեք տպագիր օրինակի հարցում 1-800-480-3287 հեռախոսահամարով ԱԱ-ի և 1-877- 238-4373 հեռախոսահամարով ՎԸԱ-ի համար, այցելեք EDD Forms and Publications (edd.ca.gov/Forms) բաժինը, կամ մոտակա ԱՊԱ գրասենյակ: Այցելեք Contact SDI (edd.ca.gov/Disability/Contact_SDI.htm) էջ՝ գրասենյակների ցանկը տեսնելու համար

Նշում. քաղաքացիությունն ու ներգաղթի կարգավիճակը չեն ազդում համապատասխանության վրա:

*Անաշխատունակության Ապահովագրություն

Անաշխատունակության ապահովագրությունը տրամադրում է աշխատավարձի փոխարինման նպաստներ այն աշխատողներին, որոնք չեն կարող աշխատել աշխատանքի հետ չկապված, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական հիվանդությունների կամ վնասվածքների պատճառով: Անաշխատունակությունը ներառում է պլանային վիրահատություն, հղիություն, ծննդաբերություն կամ դրանց հետ կապված բժշկական վիճակներ: Նպաստները վճարվում են առավելագույնը 52 շաբաթվա ընթացքում: Հավելյալ տեղեկատվության համար այցելեք Disability Insurance (edd.ca.gov/disability) կայք:

*Վճարվող Ընտանեկան Արձակուրդ

Կալիֆորնիայի Վճարվող Ընտանեկան Արձակուրդը նպաստներ է տրամադրում աշխատողներին, որոնք արձակուրդ են վերցնում ընտանիքի ծանր հիվանդ անդամի խնամքի համար, երեխայի ծննդյան հետ կապված կամ ընտանիքի անդամի՝ այլ երկիր ռազմական գործուղման արդյունքում որակավորման միջոցառմանը մասնակցելու համար: Հավելյալ տեղեկատվության համար այցելեք Paid Family Leave (edd.ca.gov/paidfamilyleave) կայքը:

ԶԶՎ-ը հավասար հնարավորություններ ընձեռող գործատու /ծրագիր է: Ըստ պահանջի՝ օգնություն և օժանդակ ծառայությունները հասանելի են անգործունակ անհատներին: Ծառայությունների, օգնության և/կամ այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն՝ զանգահարելով 1-866-490-8879 (ձայնային): Հեռատիպ (տելեթայփ, TTY) օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի հեռահաղորդակցության ծառայություն՝ 711 հեռախոսահամարով: